ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 173- Ա **02 օգոստոսի 2018 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի N 8-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի մարտի 6-ի «Քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների պետեր նշանակելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի մայիսի 17-ի N 38 – Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 8–Ա կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) կարգադրության 3.1-րդ կետի «Հակոբյան Կարենին» բառերը փոխարինել «Ղազարյան Անուշավանին» բառերով

2) կարգադրության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների պետեր նշանակել՝

Զոհրաբյան Արմեն – ինժեներական ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Համբարձումյան Համբարձում - բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Մուշեղյան Յուրա - նյութատեխնիկական մատակարարման ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

Պողոսյան Անուշ - բժշկական ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Սարգսյան Նելսոն – սննդի և առևտրի ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ

Շմավոնյան Արթուր - հասարակական կարգի պահպանության ծառայության պետ, ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության պետ /համաձայնությամբ/

Խաչատրյան Գևորգ - տրանսպորտային ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժն վարիչ

Բիձյան Հակոբջան - կոմունալ տեխնիկական և բնակչության հատուկ սպասարկումների ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի վարիչ

Հայրապետյան Արազ - կապի և ազդարարման ծառայության պետ, «Արմենթել» արևելյան տարածքային կենտրոնի Գեղարքունիք ուղղության փորձագետ /համաձայնությամբ/

Սինանյան Արսեն - էներգետիկայի և լուսաքողարկման ծառայության պետ, «Հայ էՑ» փակ բաժնետիրական ընկերության «Գեղամա» մասնաճյուղի Գավառի էլցանցի պետ /համաձայնությամբ/»:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

ՄԱՂԱԹԵԼՅԱՆ

ք. Գավառ